



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌԵՅԻՆ · 1868 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎՆՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՅՈՒԼԻՍ

ՕԳՈՒՏ ԵՒ ՎՆԱՍ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Տպագրութեան արհեստը թէ որչափ օգտակար եղած է գիտութեանց և քաղաքականութեան յառաջանալուն, աւելորդ է երկայն բացատրել. միայն այսչափ կ'ըսեմք, թէ որչափ գործ մը կը գիւրանայ և կ'ըլլայ բազմաց ստանալի, նոյնչափ և անոր յարգը կ'աւելնայ: Բայց ափսոս որ ինչպէս աշխարհիս վերայ շատ բարի բաներ մարդս 'ի չարն կը գործածէ, ինչպէս գիտութիւն և ազատութիւն, որ Աստուծոյ մի մի մեծամեծ պարգևներն են, չարաչար գործածելով կը բերէ մնաս անձին և այլոց, այսպէս և տպագրութեան արհեստը չարաչար գործածելով կ'ըլլայ մնասակար ընկերութեան: Եղան շատերը որ տպագրութենէ առաջ եկած մնասները միայն տեսնելով, լաւ էր ըսին որ կութթեմպերկ գտած իսկ

չըլլար տպագրութեան արհեստը, քան թէ գտնելով զայն՝ տպագրայից զեղծման պատճառ ըլլար: Բայց ես այսպէս չեմ ըսեր. կութթեմպերկ միշտ անմահ պիտի մնայ իր հրաշալի գիւտովն, և ոյք 'ի չարն կը գործածեն զայն, նոքա միայն պախարակելի պիտի ըլլան: Բան մը որ ըստ ինքեան բարի է և 'ի բարին սահմանեալ՝ չկրնար պախարակելի ըլլալ, եթէ ոմանք անով զեղծանին:

Ամերիկոյ Միացեալ Նահանգներն, որ դեռ դար մը չեղաւ որ իրենց ազատութիւնը ձեռք ձգեցին, ահա կը մաքառին Եւրոպիոյ հետ, և շատ բանի մէջ զնա ևս անցած են. և քաղաքականութիւնն ու գիտութիւնը այնչափ զարգացած են հոն, որ անկէ աւելին թերեւս կարելի չըլլայ յուսալու: Այս յեղափոխութեան պատճառ միթէ տը-

ապագրութեան արհեստը չէ: Հոն տպագրած մատենից, օրագրաց և լրագրաց թիւը հաշուի տակ չանկանիր, միայն այսչափ ըսեմ, թէ Գաղղիոյ և Անգղիոյ մէջ տարին այնչափ գիրք չտպագրիր, որչափ Միացեալ Նահանգաց մէջ. զի տարուէ տարի Գաղղիոյ գործարաններէն կ'ենէ 80 միլիոն հազարադրամ թուղթ, և Անգղիոյ գործարաններէն 100 միլիոն հազարադրամ, և բաւական կ'ըլլայ 68 միլիոն բնակչաց: Իսկ Միացեալ Նահանգներուն մէջ, որ 34 միլիոն ժողովուրդ ունին, կ'ենէ 200 միլիոն հազարադրամ թուղթ: Անհուն են հոն տպագրած բարձրագոյն գիտութեանց և արհեստից մատենները, անհուն են և բազմատեսակ ռամիկ ժողովուրդը կրթելու և ուսուցանելու մատենները: Արք և կանայք, աղջկունք և տղայք կարդալով կը զուարճանան: Կը տեսնես հոն հասարակ արհեստաւոր մը, ինչպէս կառավար, որմնագիր, կօշկակար, և այլն, որ մի ձեռքով արհեստին վերաբերեալ գործին բռնած, միւս ձեռքը օգտակար մատեան մը կամ լրագիր առած կը պարարէ իր միտքը:

Հին ժամանակ ալ յառաջ քան ըզտպագրութիւնն կային երևելի գիտնական անձինք և քաղաքակիրթ մարդիկ, բայց սակաւ էին և թուով. և ռամիկ ժողովուրդը խոր տգիտութեան մէջ թաղուած էր, պատճառաւ որ գրչագիր մատեններն դժուարաստանալի էին: Իսկ տպագրութեան արհեստն զիւրացոյց ամեն բան, անմերձենալի գիտութիւններն մերձաւոր ըրաւ առհասարակ և ռամիկ ժողովրդեան, և հիմա չկայ մէկը որ կարող ըլլայ ըսել, թէ զայս ինչ կամ զայն կամիմ ուսանել, բայց չունիմ հարկաւոր միջոցներն: Ահա և մեր ազգին մէջ նախնեաց անխոնջ վաստակներն, չորրորդ դարէ մինչև ցերեքտասներորդ դար, որք են աւանդապահ հայկազնեան լեզուի, և յորոյ ոմանք հազիւ թէ մի կամ երկու օրինակք մնացած են մեհաստանի մը անկեան մէջ, ինչով է որ հիմա ամենուն ձեռքը կը քալեն. ոչ

ապաքէն տպագրութեան արդեամբ: Եւ միթէ սա չեղաւ պատճառ հայկական լեզուին այժմեան կենդանութեան, մինչդեռ վերջին դարերուս մէջ գրեթէ բոլորովին խանգարեալ էր և անիմանալի եղած: Տպագրութեան արդեամբ նախնեաց գեղեցիկ իմաստներով մշտքերնիս ճոխացան, անոնց յստակ և զարդարուն գրուածքով լեզունիս կուկեցաւ:

Ահաւասիկ այս և այսպիսիք են տպագրութեան արհեստին օգտակարութիւններն. բայց նա ունի ևս իր մեծամեծ փաստներն: Միթէ ամէն օր ականջնիս չհնչեր Լուսաւորեալ դար, քաղաքակաւոնքիւն բառերուն հետ, նաև ապակաւոնքիւն դար, ակիրօնոքիւն բառերը: Բսինք վերը թէ դարուս լուսաւորութեան և քաղաքականութեան պատճառ տպագրութեան արհեստն եղած է. կ'ըսեմք դարձեալ, թէ տպագրութեան արհեստն է դարուս ապականութեան և անկրօնութեան պատճառ. ուստի և սա երկսայրի սուսեր մի է, կամ թէ նման է զրախտին մէջի աստուածատունկ ծառոյն գիտութեան բարւոյ և չարի, որ կրնար նախամարդոյն Ադամայ ըլլալ պատճառ անմահութեան կամ մահու:

Դարուս ապականութեան սերմանքը, թէպէտ շատ ազգաց մատենից մէջ կրնան տեսնուիլ, բայց ամենէն աւելին է Գաղղիոյ մէջ հրատարակուած մատեններէն. ուր թէպէտ կան շատ օգտակար գրեանք, բայց անոնց դէմ ալ կան նոյնպէս անթիւ փաստակար և թունաւոր մատենք. և գաղղիական լեզուն ալ աշխարհածանօթ լեզու մի ըլլալով, անկէ ապականութիւն կը տարածուի յորդահոս անձրևի պէս բոլոր աշխարհս, և կ'ապականէ ամէն ազգերը:

Ուրախութեան մեծ առիթ է մեզ տեսնելը որ ազգիս աշխարհական մասին մէջ ալ օր ըստ օրէ դրականութիւնը կը ծաղկի. և յայսմ հետէ մեհաստանի մը չհամարուիր ազգիս մէջ միայն եկեղեցական մասին, այլ նաև

աշխարհականաց ալ դիւրամատոյց կ'ըլլայ, որով կ'աւետէ մեզ ազգերնուս յառաջադիմութիւնը: Զի ցորչափ գրականութիւնը միայն եկեղեցականաց ձեռք է, երբեք ազգ մը չկրնար կատարեալ յառաջադիմել, զի եկեղեցականը ազգին ամենափոքր մասը միայն կը կազմէ, և ամբողջութիւնը աշխարհական դասէն է. ուստի երբ գիտութիւնը և գրականութիւնը կը ծաւալին աւելի աշխարհականաց մէջ, ըսել է թէ ազգը շուտով առաջ կ'երթայ, և ապագայ բարեաց ակնկալիք մը կը բերէ: Բայց ինչպէս նորածին տղայ մը որ ոտք ելնէ, գայթ 'ի գայթ կը քայլէ և անկման վտանգի մէջ է, եթէ մայրենի ձեռքը չբռնէ չկեցունէ զնա. այսպէս մեր ազգին աշխարհական երիտասարդք, որ նոր սկսան գրիչ շարժել, եթէ ընտրութիւնը և խոհեմութիւնը իրենց առաջնորդ չառնուն, կ'ըլլան ոչ միայն իրենց անձանց մեծ վնասու պատճառ, այլ և այլոց, դեղի տեղ գուցէ թոյն մը հաղորդելով օտարաց:

Մեր ազգայնոց դեռ ականջները բաւական մաքուր են, և սիրտերը սուրբ, և անով է որ մեր ազգը գովելի եղած է նոյն իսկ եւրոպացւոց, իբր հեռի յապականութենէ: Արդ եթէ բացուին ազգայնոց միտքերը այն պիղծ գիրքերով՝ որ մարդկային կրից սլաքներով զարդարուած են, և միտքին սիրտերը այն անկրօն գրուածներով՝ որ ընդդէմ աւետարանի և սրբոց հարց կը քարոզեն, ո՞ւր պիտի մնայ ազգին պարզութիւնը, ո՞ւր իր անխարդախ գործունէութիւնը: Այս ըսելով կը ծանուցանեմք մեր սրտին ցաւը քանի մը նորա, նոր հրատարակութեանց որ եղան և կ'ըլլան մեր ազգին մէջ, թարգմանելով այնպիսի մատենաներ, որք Եւրոպիոյ մէջ մեծամեծ վնասուց պատճառ եղած են, և արդարամիտ և ճշմարտասէր անձինքներէ արհամարհուած են. ինչպէս են Հաւատաւ քննութեան պատմութիւնը, Էօթէն-Սիւրի թափառական իրեայն, Շիլլերի վիպասանական ողբերգութիւնը, Վէրքեր վիպասանու-

թիւնը, Մոնթէ Գրիսթո, Վիկտոր Հիւկոյի թշուառները, Էօթէն-Սիւրի փառիզու գաղտնիքը, և այլն:

Յիշուի այս գրողներուն շատերը մեծ հեղինակներ են, և իրենց գրուածոց մէջ կան գեղեցիկ և վառվռուն իմաստներ, բայց քողարկեալ ունին և իրենց թոյնը և ապականութիւնը: Այս գրուածներէն ոմանք թերեւս ոչ այնչափ վնասակար ըլլան, ինչպէս Վիկտոր Հիւկոյի թշուառները, բայց մեր ազգին համար վաղաժաման են և տարածամ:

Այս ըսելով ոչ զոք արհամարհել է մտքերնիս և ոչ յաչաց հանել. այլ փափաքելի էր մեզ, որ մեր ազգին նորաշարժ գրիչները, աւելի օգտակար զբարձր իրենց առաջնորդ առնուն և թարգմանեն, որով կրկին օգուտ ըրած կ'ըլլան, մի՛ ազգին գրականութիւնը ծաղկեցունելով, միւս՝ ազգին բարոյականը անապական պահելով:

Կրնայ մէկը ըսել թէ այսպիսի մատենք աւելի ընթեռնելի կ'ըլլան ազգին մէջ, քան թէ ծանր և վարդապետական գիրքեր: — Եթէ մէկը իր հրատարակութեանց մէջ միայն շահասիրութիւնը իրեն նպատակ առնու, և ոչ ազգին բարոյական օգուտը, այնպիսին 'ի զուր կ'աշխատի բարերար ազգին կոչուելու: Թող որ կան անթիւ զուարճալի և օգտակար գիրքեր, որք նոյնպէս կրնան ազգէն ընդունելութիւն գտնել, առանց բարոյականին վնաս մը հասցունելու: Հարկաւ աշխարհական գրիչներու աւելի ազատութիւն տրուած է քան թէ եկեղեցական գրչի մը, բայց այդ ազատութիւնն ալ սահմանի մէջ բռնելու է, մանաւանդ այն ազգաց նըկատմամբ որ դեռ նոր կը զարգանան: Եւ արդարեւ ցաւալի բան է այսպիսի ազգաց մէջ ասանկ շուտով տեսնել այն գիրքերը, որ օտարաց մէջ հարիւրաւոր տարիներու գրականութենէն ետեւ երեցեր են, և երկնալուն պէս իրենց համբաւն ու վատանունութիւնը մէկտեղ տուած են:

Ուստի յօգուածնիս վերջացունելով կ'ըսեմք, թէ փափագելի է մեզ որ ազ-

գիննորանոր մատենագիրները, կամ թէ լաւ եւ ըսել, թարգմանիչներն եւ հրատարակիչներն, իրենց հրատարակութեանց մէջ լաւագոյն ընտրութիւն մը ընեն, եւ չխաբուին հեղինակին անունէն եւ գրութեան ոճէն, այլ օգտակարութիւնը միայն իրենց նպատակ առնուն եւ ազգին բարոյականութիւնը, որով տպագրութեան արհեստը օգտակարի գործածուած կ'ըլլայ մեր մէջ ալ եւ ոչ ֆիաստակարի: Ազատութիւն կարծեաց եւ ազատութիւն գրչի որչափ փափագելի եղած են դարուս մէջ, եթէ պարուրեալ չըլլան 'ի սահմանի, ունին իրենց մեծամեծ ֆիաստներն ալ, ուսկից կը փափագիմք զգուշացունել մեր ազգայինները:

Ս Ա Ր Դ Ք

(Տես երես 181)

Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԲԱՆՔ

ԺԴ

Այս խօսքերէս ետքը քերթողը լռեց. եւ ինչպէս խորին մտածութեան մը մէջ ընկղմած, սկսաւ սենեկին մէջ վեր վար քալել: Կանկ առաւ պատուհանին առջևը դիտելու այն զուարթ բնութիւնը՝ որ ծովակի մը հայելի երեսէն կ'անդրադառնար. եւ իբր թէ յափըշտակուած այն գեղեցկութենէն կարծես թէ մոռցեր էր զիս, ինչպէս ես ալ զինքը: Բայց մէյ մըն ալ ցընցուելով՝ դարձաւ նայեցաւ ինծի, ու տեսնելով որ նորէն սարդին առջին նստած ուշադրութեամբ կը դիտէի, ծիծաղելով մտեցաւ, — « կը զարմանամ, կանչեց, համբերութեանդ վրայ. կը դիտես առանց յագեցնալու, ինչպէս թէ երբեք սարդ մը տեսած չըլլայիր: Թող տեսնեմ ես ալ ինչ է որ այդպէս զարմանդ կը դրաւ: »

Առանց խօսք մը զուրցելու, իսկոյն սարդը աչացը առջին քշեցի:

— « Վահ, վահ, կանչեց քերթողական ծիծաղով, ատ ինչ այլանդակ կերպարանքի զմայլեր ես: Բայց կեցիր. այդ էակը կերպարանք չունի. ողջոյն փոր է, եթէ 'ի բաց առնուս քանի մը զոյգ երկայնաբազուկ թաթիկներ: Իր խոշոր որովայնին մէջ ընկղմած՝ կէտ մը կայ՝ ըսեմ, որ գլուխը կարծեմ պիտոր ըլլայ: Ինծի իրաւունք տուր. դիտես որ փորը ուտելեաց ընդունարան է. ուրեմն այդ էակն ալ, անպէտ այն բարւոյն որ ակամայ մեզի կ'ընէ, միայն փորու ծառայութիւնը կը հոգայ: Կը վրիպիմ արդեօք: »

— Չեմ ժխտեր, պատասխանեցի. եւ չեմ զարմանար հետեանքին ճմարտութեանը, որ ամենօրեայ փործով կը ստուգուի այն ոմանց վրայ, որոնց երևութիւն ձեռ ոչինչ կը տարբերի այդ սարդէն: Այո կը խոստովանիմ որ այդ էակին հոգը՝ մտածութիւնը ուտել է. ուտել ապրելու համար, եւ ապրիլ ուտելու համար: Բայց որչափ ալ անձնասիրութեան գաղափար ազդէ իր այս կեանքը՝ չէ զուրկ յարդեանց. վասն զի այդ վախճանին հասնիլ չկրնար առանց աշխատելու. իր կերակրիկը վայելելու համար պէտք է արդիւնաւորի. չկայ անանկ բարերար մը որ պատրաստական բերանը դնէ զայն: Որով անդադար այս է իր մէկ հատիկ մտածութիւնը. « եթէ աշխատիմ՝ անտարակոյս է որ կ'ուտեմ. բայց եթէ չուտեմ՝ ինչպէս պիտոր աշխատիմ: »

— Գեղեցիկ առաջադրութիւն, կանչեց քերթողը, որուն մէջ մարդկային հաւատարմութիւնն ալ կը պակսի:

— Սուտ չէ, ըսի, խորհրդածութիւնդ. բայց հիմայ այս ամենը մէկդի թողլով, եթէ քերթողի մը համբերութեան ցուպը կը ներէ, քնննք առանձին առանձին այդ էակին մարմնոյն արտաքին մասերը: Կը յուսամ որ վերջապէս տարբեր գաղափար մը կը ստանաք վրան. եւ այն որովայնը որ միայն ուտելեաց համբարանոց կը կոչէք, կըլ-